


ՎԵՆԱՐԱՆՈՒՄ



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ ժողովուրդը նույնքերյան օրերին ջերմորեն նշեց իր տաղանդավոր զավակ, մեր արդի գրականության մեծ նահապետ, մեծավաստակ բանաստեղծ և հայրենասեր Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը:

Համաժողովրդական սույն խանդավառ հանդիսությանն իր արտագին մասնակցությունը բերեց նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր օրհնություններով և զնահատանքով:

Նույնքերի 9-ին Մայր Աթոռում հանդիսավորապես նշվեց Մայր Աթոռի հարազատ զավակ, Գերագույն հոգևոր խորհրդի նախկին անդամ, բանաստեղծ և մեծ հայրենասեր Ավետիք Իսահակյանի հոբելյանը:

Ս. պատարագ, հայրապետական քարոզ և հոգեհանգիստ

Առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում հանդիսավոր ա. պատարագ է մատուցում Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Վազգեն վրդ. Թադևյանը:

«Հայր մեր»-ից առաջ ա. խորան է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը՝ հավատացյալ ժողովրդին խոսելու մեծ հոբելյարի ծննդյան 100-ամյակի առթիվ նրա մատենագրական, գրական մեծ վաստակի և հայրենասիրության մասին:

Նորին Սրբությունն առանձին կարևորությամբ խոսում է Ավետիք Իսահակյանի

կյանքի, նրա արտասահմանյան թափառումների, ապա նրա արտում տրոփող հայ ժողովրդի մեծ վշտի, նրա մարդասիրական մտորումների մասին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ներկայացնում է Ավետիք Իսահակյանի կյանքի այն հատվածը, որ կապված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեր օրերի վերագարթոնքի հետ (1945—1957 թթ.): Նորին Սրբությունը նշում է, թե ինչպիսի ոգևորությամբ և կորովով էր մասնակցում Ավետիք Իսահակյանը ա. Էջմիածնի ետպատերազմյա հոգևոր, մշակութային, շինարարական, հայրենասիրական ձեռնարկներին, որախանում և մխիթարվում Մայր Աթոռի նվաճումներով, մեր ժողովրդի ժամանակակից տարագրության մեջ ա. Էջմիածինը կրկին անգամ տեսնելով իր պատմական առաքելության բարձրության վրա:

Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն Ավ. Իսահակյանի հիշատակին:

Հոգեհանգստյան սույն արարողությանը ներկա են լինում նաև մեծ բանաստեղծի հարազատները:

Հոբելյանական մասնավոր նիստ Վեհաբանում

Երեկոյան ժամը 18-ին Վեհաբանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է

ունենում հոբելյանական հանդիսություն՝ նվիրված մեծանուն քանաստեղծ Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին:

Հանդիսությանը ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, թեմակալ առաջնորդներ, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներ և ուսանողությունը:

Հանդիսությանը ներկա են լինում նաև շուրջ 300 հրավիրյալներ, այդ թվում՝ մտավորականներ, արվեստագետներ՝ հրավիրված Երևանի զանազան գիտական և մշակութային հիմնարկներից:

Ավ. Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված տույն հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը:

Հանդիսությունը սկսվում է Սովետական Հայաստանի պետական հիմնի նվագով:

Այնուհետև քաջման հետևյալ խոսքով հանդես է գալիս Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ ի. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

«Վեհափառ Տեր,
Հարգելի պրն. Գասպարյան,
Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,
Սիրելի ներկաներ,

Հայ երախտագետ ժողովուրդը, հայրենիքում և սփյուռքի տարածքի վրա, սովետական եղբայրական ժողովուրդների ու աշխարհի առաջադեմ ազգերի և մտավորականության հետ, այս օրերին նշեց հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեր արդի գրականության հպարտությունն ու փառքը հանդիսացող մեծավաստակ քանաստեղծ և հումանիստ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը:

Այսօր Մայր Աթոռ ու Էջմիածինը ևս, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, իր օրհնությունն ու զնահատանքն է քերում մեծանուն քանաստեղծի և մտածողի հիշատակին ու գրական վաստակին՝ առավոտյան Մայր տաճարում ու պատարագի մատուցմամբ, հայրապետական քարոզով, հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ և այժմ Վեհաբանի հանդիսությանց այս դահլիճում՝ հանդիսավոր նիստով:

Այս մեծարժանի պատահական չէ, որովհետև Ավետիք Իսահակյանի անունը, որպես Մայր Աթոռի հարազատ զավակի, որպես ճշմարիտ ու հայրենասեր մտավորականի, կապված է այս սուրբ և համագային Հաստատության անվան ու գործունեության հետ, 1889—1891 թվականներին

որպես Գևորգյան ճեմարանի ուսանողի և մանավանդ 1945—1957 թվականներին՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամի, որպես 1945 և 1955 թվականներին ազգային-եկեղեցական ժողովների առաջին ատենապետի և հանգուցյալ Գևորգ Զ և մեր արդի Հայրապետ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսների անձնական քարեկամի ու խորհրդատուի:

Իսահակյանը Հատիճա վանքի ծխական դպրոցն ավարտելուց հետո, 1889 թվականին, ընդունվում է Մայր Աթոռի Գևորգյան ճեմարան, ուր և իր առաջին քերթվածք՝ «Արևն իջավ սարի գլխուն», գրել է Էջմիածնում, 1891 թվականին: Ծեմարանում Իսահակյանը, իր իսկ վկայությամբ, վաշտում էր սրտագին քարեկամությունը «եղբայր Սողոմոնի», ապագա անմահ Կոմիտաս վարդապետի: Արդարև, ճեմարանի ծառողին հանդիսացել է և՛ Կոմիտասի, և՛ Իսահակյանի ստեղծագործական մոտորումների ու երազանքների վայրը:

Հենց ճեմարանում էլ Կոմիտաս վարդապետը 1892—1893 թթ. «երգի է դրել» պատանի քանաստեղծի՝ Ավետիք Իսահակյանի վերոհիշյալ ոտանավորը, որպես նրա «ավագ դասակից ընկերոջ»:

«Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր տարիներ ապրել ենք նույն հարկի տակ, խոսել, կատակել ... ճամփորդել ենք միասին հայ գյուղերն ու ոխտատելիները (Սևան, Հատիճ)....», գրել է Վարդապետը Կոմիտաս վարդապետի հիշատակին նվիրված իր հուշերում:

Իսահակյանը ճեմարանում իր ուսանելու տարիներին ջերմորեն ներշնչվում էր մեր ժողովրդի ստեղծած հոգևոր մշակույթի անկրկնելի գանձերով, մեր ճարտարապետական հուշարձաններով, խնկով և մոմով օծուն մեր կանգուն ու կիսակործան տաճարներով, երբ ճեմարանի իր դասընկերներով, իր սիրելի ուսուցիչներով շրջում էր մեր պատմական վանքերն ու հուշարձանները:

Դարձյալ ճեմարանի հարկի տակ է, որ Իսահակյանի քանաստեղծական առաջին քայլերը քաջակերում է ու հովանավորում Մայր Աթոռի հարազատ զավակ, ճեմարանի սիրված դասախոս և անվանի քանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը:

Հետագա տարիներին, այդ տպավորությունների ներշնչման ներքո, Իսահակյանը գրեց իր գեղեցիկ քանաստեղծություններից մի քանիսը՝ «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Մեր նախահայրերը», «Անի», «Հայ ճարտարապետությունը»: Արդարև, «մեր հոյակապ վանքերի մոլոխ խոցերում, մեկնության մեջ, մի նշխարով, մի կոմ ջրով

և նգնությանը գիշերն անքուն», ինչպես գրել է Վարպետը, մեր նախնայաց ջանքերով ստեղծվել էին հայ հոգևոր մշակույթի անկրկնելի գանձերը:

Ավետիք Իսահակյանը միշտ կապված է եղել ս. Էջմիածնի հետ՝ բարձր գնահատելով նրա հոգևոր, մշակութային, հայրենասիրական առաքելությունը մեր ժողովրդի կյանքում:

«1902 թ. հունվարին նորից ս. Էջմիածնի վանքում էի, և ինձ համար կրկնվում էին նորից գեղեցիկ երեկոները ... գնացի տեսնելու Հայրիկին... Ամբողջ գիշերը ես նրա թուփի ձայնի, նրա արծվենի հայացքի տակ էի...»:

Նույնը կրկնվեց 1904, 1906-ին ... «Զգում էի, որ վերջին անգամ եմ տեսնում հայ ժողովրդի այդ մեծ զավակին: Մի երկար և խորին համբույրով նրա մագաղաթի նման դեղին Աջն առա և հեռացա մոռալ ու տըխուր», գրում է Իսահակյանը Խրիմյանին նվիրված իր հուշերում:

Իսահակյանը մեծ բարեկամությանը կապված էր մանավանդ Ն. Ս. Օժոթյունի Ս. Ս. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի հետ:

1955 թ. դեկտեմբերին Ս. Ս. Վազգեն Ա. նորընտիր կաթողիկոսը, ողջունելով Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակը, իր հայրապետական ողջույնի խոսքում գրում էր.

«Ուրախացրիք մեր ժողովրդին՝ ութսունամյա Քո հոբելյանի ոսկի պարգևով:

Հուզեցիր, ոգևորեցիր ու ներշնչեցիր բոլոր հայերին: Եվ մեր սրտերի բոլոր լարերից աղոթք բարձրացավ հայոց Աստուծուն Քո կյանքի համար, Քո փառքի համար»:

1956 թ. հոկտեմբերին, երբ Հին Վեհաքանի ծաղկյա դահլիճում նշվում էր Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձը, Վարպետը պաշտոնական ընդունելության ժամանակ խոսք առնելով ասաց.

«Այսօր այստեղ հավաքվել ենք կատարելու մեր շատ սիրելի Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Վազգեն Առաջինի գահակալության տարեդարձը:

Ես մոտիկից հետևում էի Վեհափառի կյանքին և գործունեությանը: Նա անկեղծ մարդ է, իր հավատի և իր հայրենասիրության մեջ: Նա մեր ժամանակի լավ մարդկանցից մեկն է:

Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Եթե նրա մաշկը քորես, Էջմիածին դուրս կգա: Եթե հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ Էջմիածնին է: Հայ ժողովուրդը երկու գորավիզ է ունեցել. մե-

կը Էջմիածինն է, մյուսը՝ ժողովրդական ազատագրական իդեալը»:

1957 թ. հոկտեմբերի 17-ին, երբ շիջավ կյանքի արևը մեծ քերթողի, Մայր Աթոռը նույնպես ծանրորեն ապրեց հայ ժողովրդի և հայ գրականության կրած վիշտը: Այս առթիվ իր ցավակցական խոսքում Հայոց Հայրապետը գրել է.

«Ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնից, վերջին ողջոյն և օրհնությունն ամենայն հայոց բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, որ բաժանվելով մեր աշխարհից, անցնում է խաղաղ ու անվրդով կյանքի մյուս ափին:

Այս բաժանումը խոր վիշտ է թողնում բոլոր սրտերում, որ բաբախում են հայրենի երկրում և հայ սփյուռքում:

...Կորցնում է նաև Մայր Աթոռը իր մեծ բարեկամին ու սիրեցյալ որդուն, որ մեր ս. Էջմիածնի հազարամյա քարերի խորհուրդը սրտում, աղոթում էր վերածնված մեր հայրենիքի կյանքի, արևի ու խաղաղ, ազատ վերելքի համար»:

Այսօր, հոբելյանի այս հանդիսավոր առիթով, քիչ հետո մի անգամ ևս կլսեք, որպես Մայր Աթոռի հարազատ զավակի, Ավետիք Իսահակյանի մոտրումներն ու խոսքը՝ նվիրված ս. Էջմիածնի առաքելությանը և դերին, որոնք արտասանվեցին այստեղ, Վեհաքանում, 1956 թ. հունիսի 23-ին, հայրապետական ընդունելության ժամանակ, Մայր Աթոռի տոնին:

Իսահակյանի բերնով մեր ժողովրդի դավաճան իմաստությունն էր խոսում՝ հաստատված մեր պատմության փորձով:

Չկա Վարպետը, բայց կա նրա բանաստեղծական, հայրենասիրական, մարդասիրական քնարը:

Չկա Վարպետը, բայց կա նրա հայատրոսի պատգամը:

Նա մեզ հետ է: Նա ապրում է հայ ժողովրդի երախտագետ սրտում: Նրա շունչը կա մեր այսօրվա հաղթական հայրենական երթի մեջ:

Վարպետը անմահ է, անմահ է նրա արվեստը, ինչպես անմահ է հայ ժողովուրդը, հավերժական՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին ու մայր հայրենիքը հայոց՝ մեր, Սովետական Հայաստանը»:

Հանդեսի բացումից հետո ընթերցվում է Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական գիրը Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ (սույն խոսքը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 11): Վեհափառ Հայրապետի շնորհավորական սույն գիրը ընթերցում է Մայր Աթոռի միաբան տ. Տիրան արք. Կյուրեղյանը:

Այնուհետև ամբիոն է հրավիրվում հոբելյանական հանդիսության գլխավոր բանախոս, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռուբեն Զարյանը**:

Հարգելի բանախոսն իր բովանդակային և շատ շահեկան զեկույցի մեջ ձեռնհասորեն և ամբողջական ձևով ներկայացնում է մեծ հոբելյարի՝ ներհուն մտածողի, փիլիսոփայի բանաստեղծական, գրական, փիլիսոփայական, հայրենասիրական և հումանիստական շնչով գրած ողջ ստեղծագործությունը, որը սնվել ու հագեցվել է ժողովրդական իսկական ակունքներից, հայ ժողովրդի պատմության դառն ու քաղցրը նկատագրից:

Բանախոսությունը լավում է հարաճուն հետաքրքրությամբ և խորը բավականությամբ:

Ապա հրավիրվում է սիրված բանաստեղծուհի **Սիլվա Կապուտիկյանը**՝ իր ողջույնի խոսքն ասելու սույն հոբելյանի առթիվ, ինչպես նաև պատմելու հետաքրքիր հուշեր Վարպետի մտերիմ, ընկերական կյանքից, մտորումներից ու մտահոգություններից:

Սիրված բանաստեղծուհին խոսում է նաև այն մասին, որ Ավետիք Իսահակյանն իր ժամանակակիցների մեջ այն քչերից մեկն էր, որ երկար թափառումներից հետո վերադարձավ հայրենիք, «տեսավ ու այդքան երկար վաշտեց վերածնված հայրենիքի ուրախությունը» և «իր մեծերին եղերակա՛նորեն զոհ տված մեր ժողովուրդը որբի բորբոք կարոտով սեր կապեց Իսահակյանի վրա, նրան տվեց իր կուտակված բնօրհույունն ու գործվքը»:

Տաղանդավոր բանաստեղծուհին հուզումով և երախտագիտությամբ խոսում է նաև Ավետիք Իսահակյանի մարդասիրության, ազնվության, ետպատերազմյան շրջանում մեր աճող գրական նոր սերնդի նկատմամբ նրա հայրական հոգատարության, նրա հոգու գեղեցկության, առիներող հմայքի, նրա գրույցների նորոգող շնչի մասին:

Բանաստեղծուհին իր խոսքն ավարտում է Ավետիք Իսահակյանին նվիրված իր նոր հուշ-բանաստեղծության արտասանությամբ:

Այնուհետև բոլոր ներկաները հոտնկալս լսում են Ավետիք Իսահակյանի կենդանի

խոսքը, նրա մտածումները և հույզերը՝ կապված ու Էջմիածնին, արտասանված ու Էջմիածնի տոնին, ծաղկա դահլիճում, 1956 թվականի հունիսի 23-ին (Վարպետի սույն խոսքը տպված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 18):

Տասը րոպե ընդմիջումից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը:

Երոյթ է ունենում Հայկական ՍՍՀ ուսդիտյի և հեռուստատեսության ժողգործիքների անասմբի մեներգիչ **Ռաֆֆի Հովհաննիսյանը**, որը կատարում է ժողովրդական «Այս, իմ ճամփեն» (խոսք՝ Ավ. Իսահակյանի) և Վաչե Հովսեփյանի «Վերադարձիր» (խոսք՝ Վահան Տեղյանի) երգերը՝ դաշնամորի նվագակցությամբ Զուլիետա Սվապանի:

Ապա երոյթ է ունենում Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի **Բելլա Դարբինյանը**, որը կատարում է Պաղտասար Դարբի «Ի մեջմանդ» (նվագակցությամբ դաշնակահարուհի Զուլիետա Սվապանի) և ժողովրդական «Սև-մուր ամպեր» (խոսք՝ Ավ. Իսահակյանի) երգերը:


Այնուհետև երոյթ է ունենում Հայկական ՍՍՀ ժողովրդական արտիստուհի **Լուսինե Զաքարյանը**: Տաղանդավոր երգչուհին մեծ սարումով և վարպետությամբ կատարում է Ռոմանոս Մելիքյանի «Ծափաղ կուտաս», Էդվարդ Միրզոյանի «Երազ տեսա», Նիկոլ Գալանտեղյանի «Այս, մարալ» և Կարո Զաքարյանի «Քնքուշ հովիկ» (խոսքերը՝ Ավ. Իսահակյանի) երգերը՝ դաշնամորի նվագակցությամբ Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստուհի Մարիաննա Հարությունյանի:

Վերջում երոյթ է ունենում Հայաստանի պետական կամերային անսամբը՝ գեղարվեստական դեկավարությամբ **Կոնստանտին Բաղդասարյանի**: Խումբը հմտությամբ կատարում է Մոցարտի «Դիվերդիսմենտ № 1», Վիվալդիի «Կոնցերտ չորս ջութակի համար», Կոմիտաս վարդապետի «Զինարես», «Հոյ, Նազան», «Երևիներն ամպել է», «Այ աղուխ», «Վաղարշապատի պար» ստեղծագործությունները:

Ժամը 21.30-ին հրավիրյալները հրաժեշտ են առնում Մար Աթոռ ու Էջմիածնից մեծ բավականությամբ ստացած:

ԵԶՆԻԿ ԱԲՂ. ՊԵՏՐՈՍՅԱՆ





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ՎԱՐՊԵՏԸ, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՈԱՄՆԵՐ
 ԴՐՈՖ. ԱՌԱՔԷԼ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ, ԴՐՈՖ. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՅԱՆԸ, ԳՐԾԵՆՏ ԱՐՏԱՇԵՍ
 ՏԻՐԱՅՅԱՆԸ ԵՎ ՄՆԱԿԱՎԱՐԺ ԱՐԱՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ